ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ*

(Կարս, Նոր Բայազետ, Դորիս, Վաղարշապատ)

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կարս քաղաքը ռուսական զորքերի կողմից ուղիղ 100 տարի առաջ (1877 թ. նոյեմբերի 6-ին) երրորդ անգամ գրավվելուց հետո և ավելի քան 40 տարի (մինչև 1919 թ.) գտնվելով Ռուսաստանի կազմում, Արևելյան Հայաստանի քաղաքների մեջ աչքի ընկավ առավել արագ զարգացմամբ ու բարեփոխմամբ, ձեռք բերեց Թուրքիայի սահմանի վրա բացառիկ կարևոր ռազմավարական հենակետի, վարչական կենտրոնի ու վաճառաշահ քաղաքի նշանակություն։ Դրան էապես նպաստեցին մեծաթիվ կայազորի առկայությունն այստեղ[1], *ինչպես նաև Ալեքսանդրապոլ—Կարս (1899 թ.) և Կարս—Սարիղամիշ (1915 թ.) երկաթգծերի գործարկումը։ Քաղաքի զարգացմանը համապատասխան, տասներեք տարում եռապատիկ աճեց քաղաքի ազգաբնակչության թիվը՝ 3137 հոգուց (1886 թ.) հասնելով մինչև 22 հազարի (1899 թ.)*[2]։

Այստեղ ևս, ինչպես Ալեքսանդրապոլում, սկզբնական շրջանում գլխավոր ուշադրությունը դարձված էր անաուիկությամբ նշանավոր ամրոցի վերաշինությանը, քանի որ ռուս-թուրքական վերջին պատերազմի ընթացքում այն հիմնովին ավերվել էր։ Ռուսական զինվորական իշխանություններից պահանջվեցին խոշոր ներդրումներ ու մեծածավալ աշխատանքային շանքեր,

---

* *Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 3։*

1 *1895 թ. Կարսի նահանգում տեղաբաշխված զորքի թիվը կազմել է 18787 մարդ (տե՛ս* «Обзор Карсской области за 1895 год», Карс, 1896):

2 *Տե՛ս վիճակագրական տեղեկությունների ձեռագիր մատյանը Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում* (№ 9(ар) В-92) *Հ. Խալփախչյանի* «Особенности планировки Карса» *հոդվածում (տե՛ս* «Проблемы истории архитектуры», М., 1974, *էջ 37) Կարսի բնակչության թիվը ենթադրաբար նշված է 80—100 հազար, որը չի համապատասխանում իրականությանը։ Քաղաքի ազգաբնակչության աստիճանական աճն ունի հետևյալ պատկերը. 1892 թ.՝ 6749 (տե՛ս* Крыс, *Կարս քաղաքը, Մոսկվա, 1893, էջ 102), 1896 թ.՝ 10549 (տե՛ս* П. Хелмицкий, Карсская область. Военно-статистический и географический обзор, ч. 2, отд. III, Тифлис, 1897). *Մոտավորապես նույն թիվը (10764) նշված է մի այլ աղբյուրում (տե՛ս* «Обзор Карсской области за 1895 год», *էջ 12), դարասկզբին՝ 11444 (տե՛ս* С. В. Ермолаев, Город Карс. Очерк культурного развития за четверть века русского владычества, Карс, 1902, *էջ 6)։ Միայն մի աղբյուրում (տե՛ս* Ф. Павленков, Энциклопедический словарь, СПб, 1899, *էջ 860) բնակչության թիվն է 22 հազար, այն էլ, հավանաբար, նկատի առնելով նաև Կարսում տեղաբաշխված կայազորի քանակը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կարսում ազգաբնակչության թիվը, ըստ տարեց կարսեցիների հայտնած տեղեկության, հասել է մինչև 30—35 հազարի։*

որպեսզի իր ժամանակի առավել հեռահար հրանոթային զենքի հնարավորություններից ելնելով, նախորդ ամրոցից (որը 1856 թ. պատերազմից հետո վերաշինել էին թուրքերը) առավել անառիկ ու կատարյալ վերականգնվեն ինչպես ամրոցը, այնպես էլ Կարսի շրջակայքում եղած պաշտպանական բազմաթիվ ամրոցիկների (форт) ամբողջ համակարգը[3]։

Միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը և Բագրատունիների մի այուղի երբեմնի թագավորանիստը հանդիսացող Կարսը կամ Կարուց քաղաքը, ըստ 1828 թ. կատարված տեղահանույթային հատակագծի, մինչև ռուսական տիրապետության ժամանակաշրջանում իրականացված քաղաքաշինական բարեփոխությունները ներկայացնում էր հետևյալ պատկերը[4]։ Հին քաղաքի կորիզը՝ պարիսպներով շրջափակված բերդաքաղաքն էր կամ «Սահարը» և նրա հյուսիսային կողմից արևելքից-արևմուտք ձգված բարձր ժայռազանգվածի վրա տեղադրված բերդը։ Վերջինիս դիրքը, շնորհիվ զահավեժ լանջերի, բնականորեն չափազանց անառիկ էր, որի շնորհիվ Կարսի բերդը հնուց ռազմավարական բացառիկ հզոր հենակետի համարում ուներ։ Կարուց գետը (Ախուրյանի վտակը), հոսելով Հին քաղաքի հարավակողմյան սարահարթի (բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ) արևմտյան սահմանով դեպի հյուսիս, խոր ձորով շրջանցում է բերդի ժայռազանգվածն ու նրա հյուսիսային կողմից շարունակում իր ընթացքը դեպի արևելք (նկ. 1)։

Բերդաքաղաքի սահմաններից դուրս էին գտնվում Կարսի՝ տարբեր ժամանակներում առաջացած մեծ ու փոքր արվարձանները (Օրթա-կապու, Բայրամ-փաշա, Սու-կապու, Թիմուր-փաշա և այլն), որոնց ընդհանուր թիվը տասն էր[5]։

Կենտրոնական Օրթա-կապու արվարձանը (որը հներից էր ու ամենամեծը, իր չափերով մոտավորապես հավասար Բերդաքաղաքին) տարածվում էր հին Կարսից հարավ սփռված հարթավայրում։ Բայրամ-փաշա արվարձանը նույնպես առաջացել էր միջնադարյան Կարսի քաղաքապարիսպներից դուրս, նրա հարավ-արևելյան դարպասի մոտ՝ ձգվելով Կարս—Ալեքսանդրապոլ խճուղու ուղղությամբ՝ նրանից հյուսիս։ Հայերով էին բնակեցված Հայկական և Սու-կապու (Ջրի դուռն) թաղերը։ Վերջինս սփռված էր բերդի հարավ-արևմտյան փեշերին, համանուն դարպասից դուրս, Կարուց գետի աջ-

---

3 Ամրոցի վերաշինության վերաբերյալ արխիվներում պահպանված են բազմաթիվ փաստաթղթեր (տե՛ս ЦГВИА, ф. 349, оп. 17-ի մի շարք համարների տակ գրանցված)։ Ֆորտիֆիկացիոն կառուցվածքների այդ բարդ համալիրի մասին կարելի է գաղափար կազմել նաև բազմաթիվ լուսանկարների միջոցով (տե՛ս «Կարս» լուսանկարչական ալբոմ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, № Г 445)։

4 ЦГВИА, ф. 15221, коллекция военно-исторических карт, планов и схем 1770 — 1918 гг. Փաստաթուղթը անվանված է՝ «План осады и взятия русскими войсками крепости Карс» և թվագրված է 1828 թ. հունիսի 23-ով։ Երևի այդ փաստաթղթից են վերարտադրված Լինչի (տե՛ս Армения հատ. I, էջ 502) և Հ. Խալփախչյանի (նշվ. աշխ., էջ 26) բերված հատակագծերը։

5 Վիճակագրական տեղեկությունների վերը հիշատակված ձեռագիր մատյանում (էջ 1) վկայակոչվում են Կարսի հետևյալ տասը «մահլաները». Հաջի-Շարիֆի, Մուստաֆա-աղայի, Հաջի-Սեյիդի, Հաջի-օղլու, Յուսուֆ-փաշայի (առաջին մաս), Արդի-աղայի, Բայրամ-փաշայի (երկրորդ մաս), Կալա-Իշիի, Հայկական և Սու-կապուի (երրորդ մաս)։

Նկ. 1.



Նկ. 2.

ափնյա թեք տարածության վրա (նկ. 2)։ Ընդարձակվելով, այն տարածվել էր նաև գետի ձախ ափին ու ընդունել Հայկական անունը։ Նույն կողմի վրա, փոքր-ինչ հարավ էր գտնվում Թիմուր-փաշա արվարձանը, որն առաջացել էր երբեմնի այստեղ գտնվող թուրքական համանուն ամրոցիկի տեղում։

Հիշյալ թաղամասերում տեղաբաշխված Կարսի բազմազգ բնակչությունը 1896 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով բաղկացած էր լուսավորչական և կաթոլիկ հայերից (5200 մարդ), թուրքերից (1380 մարդ), հույներից (1200 մարդ), ուղղափառ և աղանդավոր ռուսներից (1490 մարդ) և այլազգիներից՝ պարսիկներից, վրացիներից, հրեաներից, գերմանացիներից (250 մարդ)[6]։

Գետի երկու կողմերում գտնվող արվարձանները միմյանց և Բերդաքաղաքի հետ կապվում էին 4 կամուրջների միջոցով, որոնցից մեկը, որ միացնում էր Ջուխուր և Ժամտան հայաբնակ թաղերը, ավերվել է 1880 թ., մյուսը Մազլումի յոթաչք փայտաշեն կամուրջը (հին շուկայի մոտ) անօգտագործելի է դառնում 1891 թ.։ Հին կամուրջներից շարունակում է կանգուն մնալ Ղարախան-օղլի անունը կրող քարաշեն եռաչք կամարակապ կամուրջը, որն, ըստ տեղեկությունների, կառուցված է եղել հիջրայի 1086/7 (այսինքն՝ 1675/6) թ.։ «Միքայելյան» անունը կրող մետաղե կամուրջը կառուցվում է 1889 թ., դյուրացնելու համար կապը երկու ափերի միջև։ Այս կամուրջից էր սկսվում Սարիղամիշ տանող խճուղին։

Հիշատակված արվարձաններից Օրթա-կապուն, որպես ամենամեծը, կենտրոնականն ու իր տեղադրությամբ հարմարը, ենթարկվեց հատակագծման ու վերակառուցման, որի ուղղությամբ զինվորական իշխանությունները սկսեցին ջանքեր գործադրել քաղաքը գրավելուց անմիջապես հետո։ Այն արագացնող շարժառիթը հավանաբար հանդիսացել է քաղաքը գրավելուց մեկ տարի անց՝ 1878 թ. հունիսին ծագած հրդեհը, որի ժամանակ հիմնովին այրվել ու մոխիր էր դարձել շուրջ 200 կրպակ ու արհեստանոց և մի կարավանատուն, մոտ մեկ միլիոն ռուբլու վնաս պատճառելով տերերին[8]։ Բացի այդ, դեպի արևելք զարգացող քաղաքի հետզհետե աճող բնակչության կարիքների համար անհրաժեշտ էր իրականացնել բնակելի տների, մասնավոր ու պետական շենքերի շինարարություն։

Կարսի արտաքին բարեկարգման գործը կանոնավորելու, անցյալում խառնիճաղանջ կառուցապատված Օրթա-կապու արվարձանը վերակառուցելու և այդ կապակցությամբ հատակագիծ մշակելու, ինչպես նաև հողամասերի հատկացման հետ կապված բոլոր տեսակի հարցերը լուծելու համար զինվորական նահանգապետի տեղակալի գլխավորությամբ ստեղծվում է մի հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին ոստիկանապետը, նահանգային ինժեները, քաղաքի ճարտարապետը և քաղաքացիներից երկու ընտրովի ներկայացուցիչ[9]։

Քաղաքի գլխավոր հատակագիծը արդեն պատրաստ էր[10], ու այդ պատճառով, ինչպես նշում է Ս. Վ. Երմոլաևը «Обязанности комиссии заклю-

6 П. Хелмицкий, նշվ. աշխ., էջ 1 (թվերը կլորացված են)։
7 Կրպե, նշվ. աշխ., էջ 110։
8 Նույն տեղում, էջ 112։
9 С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 15—16։
10 Հեղինակը չի հիշատակված, հավանաբար քաղաքի գլխավոր ճարտարապետն է եղել։

чаются в осуществлении утвержденного в 1881 г. проекта по распланированию города, а именно проложению новых улиц и площадей...»[11].

Առանձին հրապարակման արժանի արխիվային փաստաթղթերի քննությունը բերում է այն եզրակացության, որ Կարսի հատակագծման ու կառուցապատման նախագիծը 1881 թ. հաստատվելու մասին Ս. Վ. Երմոլաևի վկայությունը կարիք ունի ճշտման։ Փաստաթղթերից պարզվում է, որ նախապես՝ 1880 թ. ապրիլի 19-ին, հաստատվել է Կարսի բերդի գլխավոր հատակագիծը[12], իսկ հաջորդ տարվա հուլիսի 24-ին հաստատվել են Կարսի էսպլանադային (բերդատափի, կամ բերդի ու քաղաքի միջև ընկած բաց տարածության) օգտագործման կանոնները[13]։ Դրանից հետո միայն, ու ղեկավարվելով այդ կանոններով, կազմվել է Օրթա-կապուի, նրան կից դերեզմանոցների ու այլ հողատարածությունների վրա կառուցապատվելիք 192 դեսյատին և 422 քառ. սաժ. ընդգրկող նոր Կարսի գլխավոր հատակագիծը, որը վերը հիշատակված հանձնաժողովի կողմից քննարկման ենթարկվելուց ու հավանության արժանանալուց հետո, սկսած 1882 թ. հունվարի 23-ից, բազմակի ներկայացվում է հաստատման[14]։ Այդ առթիվ շարադրված զեկույցում խնդրվում է արագացնել հատակագծի հաստատումը. «Ввиду настоятельной необходимости приступить к разбивке и планированию улиц и площадей и предоставления населению обезпечиться к будущей зиме теплыми и мало-мальски удобными помещениями, которых в настоящее время решительно неимеется...»[15].

Հատակագծի կապակցությամբ էլ Կարսի զինվորական նահանգապետների (Գրոսմանի, Տոմիչի) և Կովկասի փոխարքայության քաղաքացիական մասի գլխապետության (Главноначальствующего) վարչության միջև տարիներ շարունակ բանակցություններ են վարվում, ըստ որում գործում եղած ամենավերջին (1886 թ. մարտի 28-ով թվագրված) փաստաթղթից երևում է, որ Կարսի հատակագիծը, նրա վերաբերյալ եղած մի շարք դիտողությունների պատճառով, դեռ վերջնականապես հաստատված չի եղել[16]։ Անկախ դրանից ու ղեկավարվելով հատակագծի հիմնական սկզբունքներով, նոր Կարսը սկսել է կառուցապատվել, և գործի ընթացքում ծագած առանձին հարցերը համաձայնեցվել են հիշյալ վարչության հետ[17]։

Ձեռնարկելով հաստատված գլխավոր հատակագծի կենսագործումը, քաղաքային իշխանությունները հենց սկզբից հանդիպեցին դժվարությունների՝ կապված կառուցապատման համար հողատարածությունների հատկացման հետ։ Սահմանված նորմայով նոր տուն կառուցելու համար քաղաքացիներին հատկացվում էր 120 քառ. սաժ. (255,6 քմ) տնատեղ, որի համար անհրաժեշտ էր լինում իրացման ենթարկել մի քանի (երբեմն մինչև 5) հին տուն։ Դրանց տերերից յուրաքանչյուրը ցանկանում էր մնալ տեղում, կամ մի փոքր

---

11 С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 16։

12 ЦГВИА, ф. 349, оп. 17, ед. хр. 1041, Генеральный план крепости Карса, составленный по копии Высочайше утвержденного 19 апреля 1880 г. генерального плана.

13 ЦГИА Груз. ССР, О распланировании Карса, ф. 12, оп. 11, ед. хр. 401, թ. 1—3։

14 Նույն տեղում, թ. 1—84։

15 Նույն տեղում, թ. 4։

16 Նույն տեղում, թ. 83։

17 Նույն տեղում, թ. 80, 81, 84։

հողակտորի համար պահանջում դրամական շատ բարձր հատուցում։ Այս հարցում նույնիսկ անհրաժեշտ չափով չէր օգնում անշարժ գույքի հարկադիր օտարացման վերաբերյալ 1884 թ. գործողության մեջ մտած օրենքը։ Այս հանգամանքը ոչ միայն արգելակում էր քաղաքի արագ կառուցապատումը, այլև ազդում բնակարանների (որոնց մեծ կարիքը զգում էին հատկապես պետական պաշտոնյաները) կառուցման ժամանակի, գնի և որակի վրա[18]։

Նույն կարգի դժվարություններ առաջացան նոր շուկայի համալիրը կառուցելիս, քանի որ նրա սահմաններում գտնվող տների իրացման համար հեշտությամբ չէր հաջողվում պայմանավորվել տնատերերի հետ։ Հին շուկան ներկայացնում էր հակասանիտարական պայմաններում գտնվող փայտաշեն, տգեղ ու խախուտ խանութներից ու կրպակներից բաղկացած նեղ ու կեղտոտ փողոցների մի լաբիրինթոս։ Գարնան ձնհալի ու անձրևների հետևանքով հարակից Գյոլ-բաշի, կամ Շարամպա հրապարակում ջուրը կուտակվում, նեխում ու առաջացնում էր գարշահոտություն։ Նոր շուկայի հողատարածությունը, համաձայն կազմած նախագծի, բաժանվեց 4—5 սաժեն լայնությամբ փողոցների կանոնավոր ցանցով, որոնց ուղղությամբ կառուցվեցին քարաշեն ու ավելի բարեկարգ տեսքով խանութներ՝ յուրաքանչյուրի համար տրամադրելով առնվազն 12 քառ. սաժին հողամաս[19]։

Ընդարձակ խանութներով և արհեստանոցներով շրջապատված ու Խուբա կոչվող առևտրական հրապարակում, որը գտնվում էր Կարսի հյուսիսային մասում, կատարվում էր հացահատիկի, ալյուրի և ուտեստեղենի վաճառքը։

Չնայած առաջացած դժվարություններին և հաղթահարելով դրանք, XIX դարի վերջում և XX դարի սկզբին հաջողվեց հիմնովին վերակառուցել Կարսի ամենամեծ արվարձանը, նրա տեղում ստեղծելով իր ժամանակի համար արդիական, փողոցների կանոնավոր ցանցով պատած ու նրանց ուղղությամբ 2—3 հարկանի շենքեր կառուցված մի նոր քաղաք։

Արևելքից-արևմուտք ձգված միմյանց զուգահեռ Լորիս-Մելիքովսկայա, Ալեքսանդրովսկայա, Միխայլովսկայա և Գուբերնատորսկայա փողոցները հասնում էին մինչև Կարուց գետի առափնյա Նաբերեժնայա փողոցը՝ ուղիղ անկյան տակ հատվելով Սապյորնայա, Ինժեներնայա, Կարադաղսկայա և Պոլիցեյսկայա փողոցների հետ։ Բացի հիշատակվածներից, Կարսն ուներ արհեստների տեսակներով անվանված երկրորդական կարգի մի շարք փողոցներ (Կուզնեչնայա, Արսենալնայա, Լիտեյնայա) և նրբանցքներ (Զոլոտոյ, Սերեբրյանի, Ժելեզնի)։

Տարբեր էր այդ փողոցների նշանակությունը Կարսի վերակառուցված մասում։ Առավել բանուկը և գործարար կյանքով աչքի ընկնողները Լորիս-Մելիքովսկայա և Ալեքսանդրովսկայա փողոցներն էին, որոնցից առաջինն ամբողջապես, իսկ երկրորդը՝ մասամբ զբաղեցված էին վաճառատներով ու խանութներով, վարչական, ուսումնական և հասարակական շենքերով ու բնակելի տներով։ Կարսի՝ տարերայնորեն կառուցապատված մյուս արվարձանները մնացին անձեռնմխելի, սակայն նույնպես հարստացան նոր շենքերով։

---

18 Տե՛ս С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 17։ Մի այլ տեղ (տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 11, ед. хр. 401, թ. 20) տնատեղի չափը ցույց է տրված 200 քառ. սաժեն։

19 С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 16։ Այստեղ հրապարակի անունը հիշատակված է Շարանպոլ։

Ձեռնարկված քաղաքաշինական միջոցառումների բաղկացուցիչ մասը կազմեց քաղաքային այգու ստեղծումը Կարուց գետի աջ ափին գտնվող կղզիանման[20] մի աղատ տարածության վրա, որը դժվարությամբ ու դանդաղորեն իրացվեց ծառատնկման համար ու վերածվեց քաղաքի բնակչությանը սպասարկող զբոսավայրի[21]։ Նույն կարգի միջոցառում պիտի համարվի Սրթա-կապու արվարձանից հյուսիս-արևելք ընկած մի գոգավորության մեջ անձրևների ու ձնհալի ջրերից գոյացող «Դյոլ-բաշի» կամ «Շարամպայի» կոչված լճակի (ավելի ճիշտ՝ ճահճի) վերացումը՝ նրա ջրերը ավելի լայնահուն ջրանցքով դեպի Կարուց գետը ուղղելու միջոցով[22]։

Այսպիսին է անհամեմատ ավելի ուշ ռուսական տիրապետության տակ անցած Կարսի քաղաքաշինական բարեփոխությունների ընդհանուր պատկերը։

Նոր-Բայազեդը, որպես քաղաքատիպ բնակավայր, սկսում է կազմավորվել 1829 թ. հին Գավառ (Բյավառ) գյուղի տեղում, երբ այստեղ վերաբնակություն են հաստատում Թուրքիայից գաղթած հին բայազեդցիները։ Այդ կապակցությամբ նույն թվականին էլ Գավառը վերանվանվում է Նոր Բայազեդի[23]։

Տեղի ընտրությունը՝ Սևանա լճի հարավ-արևմտյան ափին, Նորադուզի թերակղզուց մոտ 6 կմ արևմուտք ընկած ու քամիներից պաշտպանված մի գոգավորության մեջ, նպատակահարմար է գտնվել։ Այստեղ տարածքի նկատմամբ իշխող դիրք ունի տեղացիների կողմից «Բերդի գլուխ» կոչված հրվանդանաձև մի բարձունք, որի արևմտյան սրածայր վերջավորության վրա գտնվելիս է եղել Սևանա լճի ափերին հիմնադրված ուրարտական ամրոցներից մեկը[24]։ Համանուն Գավառ գետակը ամրոցի հարավային կողմից ոչ խոր ձորով հոսում է դեպի արևելք, ապա թեքվելով հյուսիս՝ թափվում է լիճը։

«Բերդի գլուխ» բարձունքով բնականորեն մասնատված ու նրա շուրջը (բացառությամբ արևելյան կողմի) սփռված տարածքի վրա նախապես ան-

---

20 Կարուց գետը ճյուղավորվելով շրջապատում էր սրան, սակայն ամռան ամիսներին գետի ճյուղերից արևմտյանը ցամաքում էր։ Ձմռան ամիսներին սառած Կարուց գետն օգտագործվում էր որպես սահադաշտ։

21 Կ ր պ ե, նշվ. աշխ., էջ 133։ С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 18։

22 С. В. Ермолаев, նշվ. աշխ., էջ 17։ Ջրանցքի փորման աշխատանքների ընթացքում բացվել է Արաս Բագրատունի թագավորի կնոջ արձանագիր տապանաքարը, որի կապակցությամբ 1917 թ. Կարս գործուղված հնագետ Ս. Տեր-Ավետիսյանը գրում է. «Производство земляных работ, приведших к отмеченной выше находке, предпринято было карским городским самоуправлением, которое решило провести, через весь город, т. н. Гельбашинскую канаву, каковая канава должна была, в целях оздоровления Карса, служить как для стока дождевой воды с ю. склона крепостной скалы, так и для осушки соседних болот. В средней своей части канава проходила мимо ограды древнего Абасова храма (церкви Апостолов), где как раз, на глубине 2-х саж., и был найден надгробный камень» (տե՛ս С. В. Тер-Аветисян, О раскопках в Карсе и о новооткрытой армянской надписи IX века, «Известия кавказского историко-археологического института», т. III, 1925, Тифлис, էջ 121—122)։

23 ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 15, ед. хр. 31б.

24 Մ ե ս ր ո վ բ ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս Ս մ բ ա տ յ ա ն ց, Տեղագիր Գեղարքունի գավառի, որ այժմ Նոր-Բայազեդ գավառ, Վաղարշապատ, 1895, էջ 447—452, Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Նոր-Բայազեդի նորագյուտ սեպագիր արձանագրությունը և նրա հնագիտական միջավայրը, «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2, 1927, էջ 203—214, Գ. Հ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, էջ 18—20։

կանոն, իսկ դարի վերջին՝ կանոնավոր սկզբունքով կազմված հատակագծի համաձայն[25] հետևեալ սկսեց կառուցապատվել Նոր-Բայազեդ քաղաքը։ Հիշյալ սկզբունքի կիրառությունը նրա առանձին մասերում, շնորհիվ առկա հարթ տարածությունների, ընձեռում էր թեև նպաստավոր, սակայն ոչ անկաշկանդ պայմաններ։

Քաղաքաշինարարության մեջ սնպաձև առաջացած «Բերդի գլխի» գրաված դիրքին համապատասխան են տեղաբաշխվել քաղաքի չորս հիմնական թաղերը՝ Բանդի, Կալերի, Տալիզի և Խաչերի[26] (նկ. 3)։ Դրանցից առաջինը, որ ընկած է «Բերդի գլխի» հարավային բարձրադիր ստորոտին, գետափնյա գեղատեսիլ տեղանքում, ամենահինն է ու կառուցապատվել է անկանոն կերպով, թեև այստեղ կան շրջապատի հետ ներդաշնակ ու ճարտարապետական արժեք ներկայացնող քաղաքատիպ բնակելի շենքեր[27]։ Կալերի թաղը, առաջացած նախկինում այստեղ գտնվող կալերի տեղում, անջատված էր Բանդի թաղից բերդի բարձունքով։ Կանոնավոր կառուցապատմամբ բնորոշ այս թաղի կենտրոնական մասում գտնվող պարսպապատ այգու տարածության վրա XX դարի սկզբին կառուցվել են դպրոցական և այլ շենքեր։ Տալիզա վրացազգի գավառապետի օրոք 1835—1840 թթ. ընթացքում կառուցապատված ու նրա անունը կրող Տալիզի թաղը տեղաբաշխվել է Բանդի և Կալերի թաղերից արևմուտք։ Բացի բնակելի տներից, թաղում կային ուսումնական, բուժական ու կոմունալ բնույթի մի շարք շենքեր[28]։ Խաչերի թաղը, որ իր անունն ստացել էր այստեղ գտնվող բազմաթիվ խաչքարերի պատճառով, գտնվում է քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում և ուներ ուղիղ փողոցների ցանց[29]։

Նոր-Բայազեդում քաղաքաշինական աշխատանքներն իրականացվել են Երևանի նահանգական վարչության շինարարական բաժնի հսկողությամբ, որտեղ պահվելիս է եղել նաև իրենց կողմից հաստատված գլխավոր հատակագիծը։ Տեղում համապատասխան մասնագետի (ճարտարապետի կամ հողաշինարարի) բացակայության պատճառով «մերթ հեռվից, մերթ գործուղված հողաշինարարների միջոցով»[30] վերահսկողությունը իրականացվել է Երևանի նահանգական վարչության շինարարական բաժնի կողմից։ Գլխավոր հատակագծով թաղամասերը համարակալված էին (գրագրություններում հիշատակվում է մինչև 34 համար կրող թաղամաս)[31]։

Նոր-Բայազեդի հիմնադրմանն ու զարգացմանը զգալի չափով սատարել են Արծրունի տոհմի ներկայացուցիչները։ Դրանցից Մկրտիչ Արծրունու նախաձեռնությամբ ու գլխավորությամբ կազմակերպվել է վերաբնակեցումը, իսկ Բարսեղ Արծրունու ֆինանսավորմամբ կառուցվել են դպրոցական շենքեր, կրպակներ և այլն։ Քաղաքի կառուցապատման պատմության մեջ ար-

---

25 Արխիվներում առայժմ չի հաջողվել հայտնաբերել հատակագիծը։ Ներկայացվող սխեման կազմված է հիմնվելով Նոր-Բայազեդի այն տեղահանույթային հատակագծի վրա, որը օգտագործել է Ալ. Թամանյանը քաղաքի նոր հատակագիծը մշակելիս։

26 Ն. Ծ. Պապուխյան, Այունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1970, էջ 33։

27 Բանդի թաղը իր անունը ստացել է Գավառապետի վրա այս մասում կառուցված պատվարի (բանդի) շնորհիվ (տե՛ս Ն. Ծ. Պապուխյան, նշվ. աշխ., էջ 33)։

28 Ն. Ծ. Պապուխյան, նշվ. աշխ., էջ 34։

29 Նույն տեղում, էջ 36։

30 Նույն տեղում, էջ 33։

31 Նույն տեղում։



Նկ. 3.

դյունավետ են եղել թիֆլիսահայ գավառապետ Իսահակ Աբելյան-Աբամելիքյանցի պաշտոնավարության տարիները[32], երբ կառուցված 100-ի չափ կրպակների շնորհիվ կազմակերպվում է քաղաքի առևտրա-հասարակական կենտրոնի ճարտարապետական դիմագիծը։

Նոր-Բայազեդի այս կենտրոնի ինքնատիպ ճարտարապետական անսամբլը վերջնականապես ձևավորվում է XX դարի սկզբին՝ 1903 թ., երբ ավարտվում է նրա արևելյան կողմում կառուցվող, հրապարակի վրա տարածականորեն իշխող եկեղեցու շինարարությունը, իսկ հրապարակի կենտրոնը կանաչապատվում է և վերածվում զբոսատեղի։

Էլ ավելի աճում են քաղաքաստեղծ գործոնները, երբ 1881 թ. ավարտվում է Ելենովկա (Սևան)—Նոր-Բայազեդ խճուղային ճանապարհի շինարարությունը՝ դյուրացնելով կապը Երևանի հետ[33]։ Դրա շնորհիվ քաղաքի բնակչության թիվը 35 տարիների ընթացքում (1835—1870 թթ.) ավելի քան կրկնապատկվել էր, իսկ տների թիվը 500-ից հասել էր 1101-ի[34]։

Գորիսը, լեռնային Զանգեզուրի այդ ինքնատիպ ու գողտրիկ բնակավայրը, քաղաքաշինական նույն սկզբունքի կիրառության արդյունք է և միասնաբար կառուցապատվել է համանուն գետի գեղատեսիլ հովտում, բնության հմայիչ միջավայրում։ Այստեղի բնակիչները մինչև XIX դարի առաջին կեսն ապրում էին գետակի ձախափնյա մասում ընկած հին Կյորես կամ Շեն գյուղում։ Անհիշելի ժամանակներից եկող և անձավային բնակարաններով («քերձերով») հարուստ այս գյուղը թառած էր բարձրաբերձ լեռան սրածայր ժայռերով պատած թեք լանջին ու Զանգեզուրի մյուս (Խոտ, Խնձորեսկ, Շինուհայր և այլն) գյուղերի պես աստիճանաձև կառուցապատմամբ իջնում էր մինչև գետակը։

Բնակավայրի այսպիսի տեղադրությամբ առաջացած դժվարությունները և բնականոն կենսապայմանների հասնելու ձգտումը թելադրում է մտածել հին Կյորեսը լքելու և գետակի աջափնյա ազատ տարածության վրա նոր Գորիս հիմնադրելու մասին։

Որպես այս գաղափարի նախաձեռնողներ հանդես են գալիս գավառապետ Ստարացկին և Մանուչար բեկ Մելիք-Հյուսեյնյանը[35]։ Ընդարձակ և հարթ մի տարածության վրա սկսվում է կառուցապատվել նոր Գորիսը՝ սփռված հովտի աջափնյա մասում, որը սկիզբ է առնում Եռակատար կոչված բարձունքի փեշերից ու մեղմ թեքությամբ իջնում դեպի արևելք՝ մինչև Գորիս գետակը և դեպի հարավ, ուր հովիտը գնալով լայնանում է։ Նոր Գորիսի կառուցապատումը տեղի է ունենում կազմված գլխավոր հատակագծի համաձայն[36]։ Բնակավայրի հատակագծային հենքը կազմել է վեցական երկայ-

---

32 Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 36—37։

33 Նույն տեղում, էջ 32 (թվականը նշված է 1880), էջ 427 (թվականը նշված է 1881)։

34 Նույն տեղում, էջ 87։

35 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 262։ Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903, էջ 526։ Մեկ ուրիշ աղբյուր (Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 92) նոր Գորիսի տեղի ընտրությունը և փոխադրվելու գաղափարը վերագրում է գավառապետ Կարաևին։

36 Գորիսի հատակագիծը, ինչպես նաև հեղինակի ազգանունը արխիվներում առայժմ չի հաջողվել հայտնաբերել։ Ներկայացված հատակագծի սխեման կազմված է տեղահանույթային հատակագծի նյութերով։

նական (17 մ լայնությամբ) և լայնական (24 մ լայնությամբ)[37] փողոցների կանոնավոր ցանցը, որի առաջին խումբն ունի հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, իսկ երկրորդը՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությունները։ Փոխուղղահայաց սրանց հատումներով առաջանում են երկու ստանդարտ չափերի (106×106 մ և 106×212 մ) քառակուսի և քառանկյուն թաղամասեր (նկ. 4)։

Նոր բնակավայրի կառուցապատումն սկսվում է 1850-ական թթ., սակայն ավելի կազմակերպված ընթացք է ստանում 1870-ական թթ., երբ աճում է բնակավայրի վարչա-տնտեսական նշանակությունը և ավելի մարդաշատ են դառնում Գորիսի շուկայական հրապարակում ավանդաբար կազմակերպվող տոնավաճառները։ Դրան համապատասխան աճում է նրա բնակչությունը, 1913 թ. հասնելով 2212-ի[38]։

Համաձայն կառուցապատման հատակագծի, յուրաքանչյուր տնտեսությանը տրվում էր 400 քառ. սաժ. (1840 քմ) հողամաս՝ փողոցի կողմից, կողքի ճակատով դեպի փողոց դուրս եկող մենատուն տեղադրելու պայմանով։ Բնակելի տները՝ կառուցված հատուկ նախագծերով ու ժողովրդական վարպետների ինքնագործ ստեղծագործությամբ, ունեն նպաստավոր դիրքորոշում, քարաշեն են և 1—2 հարկանի, միասնական ու ներդաշնակ են ճարտարապետական իրենց ընդհանուր նկարագրով ու մանրամասներով[39]։

Ինչպես նշում է Ն. Ծ. Պապուխյանը, «Գորիսը պաշտոնապես քաղաք դարձավ XIX դարի 80-ական թթ. վերջերին։ Նրա զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել Շուշի—Գորիս ճանապարհի շինարարությունը 1869—1877 թթ.»[40]։

Նոր Գորիսի հասարակական կենտրոնը կազմավորվում է բնակավայրի հարավ-արևելյան կողմում (իր տեղում պահպանելով ավանդական տոնավաճառի շուկայական հրապարակը)։ Հիշյալ կենտրոնում գտնվող արևմտյան կողմում է տեղադրվում «Պասաժ» կոչված առևտրական շենքը։ Հրապարակը պարագծով կառուցապատվում է երկհարկանի շենքերով, որոնց առաջին հարկերում տեղավորված էին խանութները։ Հրապարակամերձ (դեպի հարավ ձգված) փողոցում էին գտնվում տասնյակ խանութների ու արհեստանոցների միահարկ շենքերը։ Հասարակական կենտրոնին կից, հարավ-արևելյան կողմում ստեղծվում է 75×225 մ չափերի քաղաքային այգին։

Խոսելով Գորիսի մասին, Ի. Սեգալը նշում է, որ 31 տարիների ընթացքում (սկսած 1870 թ.) նոր Գորիսը կառուցապատվել է այնպես, որ ներկա-

---

37 Ինչպես նշում է Ն. Ծ. Պապուխյանը (ելնելով Գորիսի նոր, սովետական ժամանակաշրջանում կատարված հատակագծման նախագծի հեղինակ Պ. Ե. Խոյեցյանի բացատրագրից), փողոցների լայնությունն ընտրելիս ղեկավարվել են Ռուսաստանի քաղաքների համար դեռևս 1742 թ. սահմանված 8 և 10 սաժ. լայնության նորմայով (տե՛ս նրա «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը», Երևան, 1970, էջ 38)։

38 Մեկ այլ աղբյուրի համաձայն (տե՛ս Н. Л. Сегаль, Елизаветпольская губерния. Впечатления и воспоминания. Тифлис, 1902, էջ 75), դեռևս XX դարի սկզբին Գորիսն արդեն ուներ 4000 բնակիչ։ Նույն թիվը հիշատակում է նաև Ս. Էփրիկյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 526)։

39 Նշված հատկանիշներով հիշեցնում են Շուշիի բնակելի տները։

40 Ն. Ծ. Պապուխյան, նշվ. աշխ., էջ 36։



Նկ. 4.

յացնում է լիովին ամբողջական ու բարեկարգ մի բնակավայր, հարուստ բազմաթիվ լավ տներով ու բարեկարգ փողոցներով[41] (Նկ. 5)։

Վաղարշապատի, Արարատյան դաշտի այս հինավուրց բնակավայրի զարգացումն ու ճարտարապետական կերպարանափոխումը հիմնականում տե-

[41] И. Сегаль, նշվ. աշխ., էջ 75։

ղի է ունենում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին։ Դատելով 1827 թ. կատարած տեղահանույթային հատակագծից[42] (նկ. 6), XIX դարի սկզբին Վաղարշապատ բնակավայրն ու Ս. Էջմիածին մայրավանքը անջատ էին միմյանցից ու նրանց միջև կար որոշ աղատ տարածություն։ Այդ մասին է վկայում նաև արխիվային մի այլ փաստաթուղթ՝ Ս. Էջմիածնի վանքի համայնապատկերը ներկայացնող մի նկար[43] (նկ. 7)։ Ըստ դրանց մայրավանքից հյուսիս-արևմուտք ընկած տեղանքը աղատ է եղել կառուցապատումից։

Ըստ Ղ. Ալիշանի, սկզբնապես գյուղը կից է եղել վանքին։ Անջատումը տեղի է ունեցել, երբ սկսած 1763 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք վանքի շուրջն ընկած մի ընդարձակ տարածություն պարսպապատվել է հողաշեն պարիսպներով։ Այդ կապակցությամբ են քանդվել վանքի հյուսիսային պարիսպներին հարակից շենքերը, առաջացնելով մի ազատ տարածություն գյուղի և մայրավանքի միջև[44]։ Նույն կաթողիկոսը, բնակավայրը առանձին եկեղեցով ապահովելու նպատակով, 1767 թ. կառուցել է տալիս Ս. Աստվածածին փայտածածկ եկեղեցին, որի տեղում մեկ դար հետո կառուցվում է նույն անունը կրող, անգմբեթ, ընդարձակ, երեք զույգ մույթերի վրա հենվող թաղածածկ տանիքով քարաշեն եկեղեցին[45], որն այժմ էլ գոյություն ունի։

XIX դարի ընթացքում Վաղարշապատ բնակավայրի ու մայրավանքի միջև ընկած ազատ տարածությունը հետզհետե կառուցապատման է ենթարկվում։ Այստեղ առաջանում է հասարակական կենտրոն՝ առևտրական շենքերով (ղանթարով), խանութներով, արհեստանոցներով, բաղնիքով և այլն։

Եթե Վաղարշապատի հին, անցյալում տարերայնորեն առաջացած ու կանոնավորությունից զուրկ կառուցապատման մեջ (որի սահմանները հասնում էին մինչև բնակավայրը շրջանցող Քասախ գետը) բնակելի տները գերազանցապես հողաշեն էին, ապա մայրավանքին հարող նոր կառուցապատված մասում, երկու փոխուղղահայաց (այժմյան Մյասնիկյան ու Աթարբեկյան) և սրանց ուղիղ անկյան տակ հատող մի քանի փողոցների ցանցով ընդգրկված տարածության վրա շինվում են 1—2 հարկանի քարաշեն և աղյուսաշեն բնակելի տներ։ Իրենց ինքնատիպ ճարտարապետական նկարագրով սրանք ընդհանրություն ունեին Արարատյան դաշտի մյուս բնակավայրերի՝ Երևանի, Աշտարակի, Օշականի և Ոսկեվազի ժողովրդական բնակելի տների ճարտարապետության հետ։

Վանքապատկան հողատարածության ռոգումը կարգավորելու նպատակով Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը (1843—1857 թթ.) ձեռնարկեց արհեստական լճի շինարարությունը, ինչպես նաև լճի հարավային կողմում մոտ մեկ քառ. մղոն տարածության վրա արհեստական անտառի ստեղծումը[46], որպիսիք քաղաքաշինական կարևոր միջոցառում պիտի համարվեն բնակավայրի միկրոկլիման բարելավելու տեսակետից։

---

42 ЦГВИА, ф. 349, оп. 44, ед. хр. 1594։ Հրատարակված է Հ. Խալփախչյանի «Гражданское зодчество Армении», М., 1971 աշխատությունում (էջ 17)։

43 ЦГВИА, ф. 418, № 783. Նկարի տակ կա հայերեն և ռուսերեն մակագրություն։ Հրատարակության տեղը նշված է Սանկտ-Պետերբուրգ, տարեթիվը՝ 1805, մեկենասը՝ վաղարշապատցի Հարութ Աժատուրյանը։

44 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 209։

45 Նույն տեղում։

46 Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Սրու-



Ч4. 5.



Ч4. 6.

XIX դարի երկրորդ կեսին, հատկապես Գևորգ IV կաթողիկոսի գահակալության տարիներին (1866—1882 թթ.) ավելի աշխուժանում ու լայնահուն է դառնում Էջմիածնի շինարարական գործունեությունը, որի արդյունքներր քաղաքաշինական նոր որակ են բերում Վաղարշապատին։ Կառուցվում են տարբեր բնույթի՝ թանգարանի (Մայր տաճարին կից), Երեմյան խցերի, Գևորգյան ճեմարանի. վանքային տպարանի և Հայրիկյան թանգարանի, Սի-

Նկ. 7.

նոդի, ճեմարանականների հանրակացարանի, Սերտանոցի, հիվանդանոցի և այլ շենքեր։ Դրանց և հետագայում կառուցվելիք շենքերի նպատակահարմար տեղադրությունն ապահովելու նպատակով, Մայր աթոռի պատվերով 1892 թ. մշակվում է հատակագիծ (հեղինակ՝ ճարտ. Պ. Շտերն)։ Ղեկավարվելով դրանով, XIX դարի վերջին և XX դարի սկզբին մայրավանքի ճարտարապետական համալիրը հարստանում է Մատենադարանի, Նոր վեհարանի, աստղադիտարանի շենքերով։ Իրենց ճարտարապետական արժանիքների տեսակետից տարբեր լինելով հանդերձ, այդ շենքերը ընդհանուր առմամբ Վաղարշապատի վանքային մասում ստեղծում են ճարտարապետական առավել բարետես միջավայր, դրանով իսկ բնակավայրին հաղորդելով քաղաքաշինական նոր հատկանիշներ։

* * *

Ներկա հաղորդման մեջ համառոտակի քննարկված նյութը ակնառու կերպով ցույց է տալիս, որ քաղաքաշինական մշակույթի զարգացման տե-

սաղեմ, 1927, էջ 3854։ Աբել արքեպ. Միթարյանց, Կաթուղիկե Մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրեից նորին, Վաղարշապատ, 1874, էջ 34, 38—39։

սակետից չափազանց հին և հարուստ ավանդություններ ունեցող Հայաստանում, հատկապես նրա արևելյան հատվածում, պատմական զարգացման այս կարճ, սակայն հայ ժողովրդի համար էական ու բախտորոշ ժամանակաշրջանում քաղաքաշինական արվեստը թևակոխում է զարգացման որակապես տարբեր, մի նոր փուլ։

Սեպբունքորեն նորն ու իր ժամանակի համար առաջադիմականը՝ դա քաղաքների ու քաղաքատիպ բնակավայրերի վերակառուցումն է՝ նոր կազմրված հատակագծերի հիման վրա, որի հետևանքով անցյալում խառնիճաղանջ ու տարերայնորեն կառուցապատված մի քանի քաղաքներում սկսում են արմատավորվել որոշակի կարգ ու կանոն, փողոցների փոխուղղահայաց ցանց։ Դրան համապատասխան տեղաշարժեր են նկատվում քաղաքների կոմունալ տնտեսության որոշ բարելավման, բարեկարգման ու քաղաքատիպ ճարտարապետության կազմակերպման ուղղությամբ։

ПЛАНИРОВКА И ЗАСТРОЙКА ГОРОДОВ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XIX ВЕКЕ И В НАЧАЛЕ XX ВЕКА

Доктор архитектуры В. М. АРУТЮНЯН

(Резюме)

Освобождение Восточной Армении от многовекового персидского владычества и присоединение ее к России явилось важным историческим событием. Оно благотворно повлияло на все сферы материальной и духовной жизни народа, в том числе на градостроительство и архитектуру.

Города Восточной Армении—Ереван, Александрополь (Ленинакан) и некоторые населенные места городского типа—Нор-Баязед, Горис и Вагаршапат (Эчмиадзин),—которые в прошлом были застроены хаотически, имели низкий уровень благоустройства и коммунального хозяйства, в течение XIX в. вступают на новую стадию своего градостроительного развития и начинают постепенно преобразовываться. Такие же градостроительные преобразования происходят в городе Карсе после его присоединения в 1878 г. к Восточной Армении.

Эти качественные изменения являются следствием осуществленных градостроительных мероприятий, нашедших свое отражение в составленных для названных городов (кроме Вагаршапата) генеральных планах. Они получают воплощение начиная с тридцатых годов прошлого столетия, и особенно интенсивно—во второй его половине и в начале XX в. Благодаря этому в городах Восточной Армении начинает внедряться получившая широкое применение в России и являющаяся прогрессивной для своего времени система регулярной планировки населенных мест.